ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0019 ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան 19, +374 11 51 34 77, davit.manukyan@parliament.am

N_007 «1» դեկտեմբեր, 2017թ.

Հարգելի՛ «Հետք» պարբերականի լրագրող Սեդա Ղուկասյան

Ի պատասխան Ձեր 25.11.2017թ. հարցման՝ հայտնում եմ, որ ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում իմ կողմից բազմիցս կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություններ ինչպես ՀՀ Ազգային ժողովում, այնպես էլ Կոտայքի մարզի տարբեր համայքներում:

Հայտնում եմ Ձեզ, որ ԱԺ պատգամավոր /085 ռեյտինգային ընտրակարգով/ ընտրվելուց հետո Հրազդան քաղաքում բացել եմ գրասենյակ: Գրասենյակը գործում է շաբաթը 6 օր՝ առավոտյան ժամը 10-ից մինչև երեկոյան ժամը 19.00-ը: Քաղաքացիների ընդունելությունը կատարվում է իմ կողմից անհատական սկզբունքով:

Քաղաքացիները ինձ դիմում են նաև գրավոր: Բոլոր դիմումատուները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ստանում են իրենց պատասխանը:

Հրազդան քաղաքի և հարակից գյուղերի բնակիչներն ինձ դիմում են սոցիալական և իրավական ոլորտի ամենատարբեր հարցերով: Ինձ դիմած քաղաքացիներից յուրաքանչյուրի խնդրին օրենքով ինձ վերապահված լիազորությունների շրջանակում փորձել եմ ընթացք և լուծում տալ:

Քաղաքացիների հետ հանդիպումների ընթացքում, եթե առաջիկայում ձևավորվեն այնպիսի հարցեր, որոնք հիմք կհանդիսանան օրենսդրական նախաձեռնության համար, օրենքով ինձ ընձեռված հնարավորությունների շրջանակում հանդես կգամ օրենսդրական նախաձեռնությամբ:

ԱԺ պատգամավոր

Դավիթ Մանուկյան